

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի շնորհավորանքի խոսքը
Գրադարանավարի օրվա առթիվ

Հարգելի գրադարանավարներ

Գիրքը հայ մշակույթի անբաժան արժեքներից է, հայ մարդու պաշտամունքը, որ
գալիս է դարերի խորքից: Այն մշտապես լուսավորել է մեր ազգի երթը, այսուհետ էլ
շարունակելու է մեզ հաղորդակից դարձնել հայ ու համաշխարհային մտքի գրական
գոհարներին, ճանապարհ հարթել մեր սերունդների կրթության ու
դաստիարակության, գիտության ու մշակույթի զարգացման համար: Իսկ ձեր
նվիրական աշխատանքը փոխհատուցվում է մարդկանց մեջ դեպի գիրքը սեր ու
երախտագիտություն արթնացնելով, ինչը նպաստում է մեր երկրի համար գրագետ
ու կիրթ հասարակություն պատրաստելուն:

Շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առթիվ, մաղթում քաջ առողջություն,
խաղաղ հայրենիք, անսպառ հաջողություններ անձնական կյանքում եւ
աշխատանքում:

Լավագույն ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան